# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

09 ՀՈՒՆԻՍԻ 2025թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 15 անդամներ:

Բացակա էին՝ Գնել Մկրտչյանը, Ռուզաննա Պողոսյանը, Արմեն Կոստանյանը, Վարդուհի Բաղալյանը, Էդգար Վարդանյանը, Զարուհի Կիրակոսյանը, Նորայր Զախարյանը, Օհան Օհանյանը, Նաիրա Խանդանյանը, Սամվել Զաքոյանը, Վալտեր Գեվորգյանը, Միքայել Միքայելյանը

**Ավագանու նիստին մասնակցում էին՝**
Տիգրան Բրսիկյան, Արա Գեվորգյան, Հասմիկ Եսայան, Լիլիթ Բաբինյան, Արծրուն Ղուրշուդյան, Վարսենիկ Խաչատրյան, Ալվարդ Մանուկյան, Դավիթ Մազմանյան, Տիգրան Զախարյան, Մուրադ Մովսիսյան

**Նիստը վարում էր Գավառ համայնքի ղեկավար՝ Գուրգեն Մարտիրոսյանը**

**Նիստը արձանագրում էր Գավառի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Կարինե Մանուկյանը**

**ԼՍԵՑԻՆ**

***ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ առաջարկվում է.

1.Հաստատել Գավառ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հինգերորդ նիստի օրակարգը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 112-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 -2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՏԻԳՐԱՆ ԲՐՍԻԿՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ , 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերի և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1. հոդվածի պահանջներով՝ առաջարկվում է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն 1, 2, 3 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 113-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՏԻԳՐԱՆ ԲՐՍԻԿՅԱՆ)***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ , 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերի պահանջներով, առաջարկվում է՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի ավագանու 2025 թվականի հունվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 2-Ն որոշման 2, 3 և 6 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 114-Ն)*

**ԼՍԵՑԻՆ**

***ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(ՁԵԿ. ԳԵՎՈՐԳ ԱՂԼԱՄԱՋՅԱՆ)***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2- րդ մասի, 23-րդ հոդվածի, ՀՀ Հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ կետի և 245-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով, Գավառ համայնքի ավագանու 12.04.2024թ.թիվ 107-Ա որոշմամբ հաստատված կարգով՝ առաջարկվում է.

1.Շարժական և անշարժ գույքերի գույքահարկերի գծով առաջացած տույժերը ըստ ներկայացված ցուցակների փոխհատուցել Գավառ համայնքի 2025 թվականի համայնքի բյուջեի միջոցների հաշվին, քանի որ ցուցակներում ընդգրկված անձինք համայնքի բյուջե վճարել են իրենց սեփականություն համարվող գույքերի հարկերը առանց տույժ-տուգանքների.

Ներկայացվում են ցուցակները ըստ բնակավայրերի.

***1. Գավառ քաղաք***

| | |
|---|---|
| ա.հողի հարկի գծով տույժ՝ | 55 437 ՀՀ դրամ |
| բ.շենք-շինություններիգծով գույքահարկի տույժ՝ | 21 391 ՀՀդրամ |
| գ.փոխադրամիջոցների գծով գույքահարկի տույժ՝ | 28 546 ՀՀդրամ |
| Ընդամենը՝ | 105 374 ՀՀ դրամ |

***2. Սարուխան բնակավայր***

| | |
|---|---|
| ա.հողի հարկի գծովտույժ՝ | 34 130 ՀՀ դրամ |
| բ.շենք-շինությունների գծով գույքահարկի տույժ՝ | 39 278 ՀՀդրամ |
| գ.փոխադրամիջոցների գծով գույքահարկի տույժ՝ | 18 618 ՀՀ դրամ |
| Ընդամենը՝ դրամ | 92 026 ՀՀ |

***3.Կարմիրգյուղբնակավայր***

| | |
|---|---|
| ա.հողի հարկի գծովտույժ՝ | 297 100 ՀՀ դրամ |
| բ.շենք-շինությունների գծով գույքահարկի տույժ՝ | 15 600 |

ՀՀդրամ
Ընդամենը՝ 312 700 ՀՀ
դրամ

***4.Նորապուսբնակավայր***

ա.անշարժ գույքի հարկ՝ 20 743 ՀՀ
դրամ
բ.հողի հարկի գծովտույժ՝ 98 822 ՀՀ դրամ
բ.շենք-շինությունների գծով
գույքահարկի տույժ՝ 48 614 ՀՀդրամ
գ.փոխադրամիջոցների գծով
գույքահարկի տույժ՝ 39 906 ՀՀ
դրամ
Ընդամենը՝ 208 085 ՀՀ
դրամ

***5. Ծովոզարդ բնակավայր***

ա.հողի հարկի գծովտույժ՝ 98 395ՀՀ դրամ
Ընդամենը՝ 98 395 ՀՀ
դրամ

***6. Լճափ բնակավայր***

ա.հողի հարկի գծովտույժ՝ 40 711 ՀՀ դրամ
Ընդամենը՝ 40 711 ՀՀ դրամ

***7. Լանջաղբյուր բնակավայր***

ա.փոխադրամիջոցների գծով
գույքահարկի տույժ 8 200 ՀՀ դրամ
Ընդամենը՝ 8 200 ՀՀ դրամ

Ըստ ներկայացված ցուցակների տույժերի գծով տալ արտոնություններ և արտոնությունների գումարը 865 491 /ութ հայուր վաթսունհինգ հազար չորս հարյուր իննսունմեկ/ ՀՀ դրամ փոխհատուցել Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեով այդ նպատակով նախատեսված 1.6.1. (ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ) գործառնական դասակարգման 4823 (հարկեր և տուրքեր) տնտեսագիտական հոդվածով նախատեսված միջոցների հաշվին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 115-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(ՁԵԿ. ԱՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ)***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 21) կետի դրույթներով, հիմք ընդունելով «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2025 թվականի ապրիլի 25-ի գնահատման հաշվետվությունում նշված շուկայական արժեքները

1.Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող հետևյալ գույքերն օտարել աճուրդային կարգով.
1) Գավառ քաղաքի Կենտրոնական հրապարակ 2/2 հասցեում գտնվող շինությունը.
2) Գավառ քաղաքի Ազատության փողոց 1-ին նրբանցք 2-րդ փակուղի 3 հասցեում գտնվող շինությունը.
2. Անշարժ գույքերի համար որպես աճուրդի մեկնարկային գին սահմանել «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2025 թվականի ապրիլի 25-ի գնահատման հաշվետվությունում նշված հետևյալ շուկայական արժեքները.
1) Գավառ քաղաքի Կենտրոնական հրապարակ 2/2 հասցեում գտնվող շինություն – 4 548 000 /չորս միլիոն հինգ հարյուր քառասունութ հազար/ ՀՀ դրամ.
2) Գավառ քաղաքի Ազատության փողոց 1-ին նրբանցք 2-րդ փակուղի 3 հասցեում գտնվող շինություն – 14 008 504 /տասնչորս միլիոն ութ հազար հինգ հարյուր չորս/ ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 116-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(ՁԵԿ. ԱՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ)***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ, 36-րդ և 37-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ

հոդվածի 1-ն մասի, Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 21) կետի դրույթներով՝ առաջարկվում է.

1. Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող Գավառ քաղաքի Սայադյան փողոց 110 հասցեում գտնվող 965,3 (ինն հարյուր վաթսունհինգ ամբողջ երեք տասնորդական) քմ ներքին մակերեսով շենքն ու շենքի զբաղեցրած և սպասարկման համար նախատեսված 0,0793 (զրո ամբողջ յոթ հարյուր իննսուներեք տասհազարերորդական) հա մակերեսով հասարակական կառուցապատման նշանակության հողամասը անհատույց օգտագործման իրավունքով, 2030 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ օգտագործման ժամկետով տրամադրել «Գավառի Հայրապետ Խաչատրյանի (Կոլոտ) անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ արտադպրոցական կրթության ծառայության մատուցում իրականացնելու նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 117-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ)***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ, 36-րդ և 37-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի 1-ն մասի, Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 21) կետի դրույթներով՝ առաջարկվում է.

1. Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող Գավառ համայնքի Սարուխան գյուղի Մ. Խորենացու փողոց 32 հասցեում գտնվող 713,1 (յոթ հարյուր տասներեք ամբողջ մեկ տասնորդական) քմ մակերեսով մանկապարտեզի շենքն ու շենքի զբաղեցրած և սպասարկման համար նախատեսված 0,21047 (զրո ամբողջ քսանմեկ հազար քառասունյոթ հարյուրհազարերորդական) հա մակերեսով հասարակական կառուցապատման նշանակության հողամասը անհատույց օգտագործման իրավունքով, 2030 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ օգտագործման ժամկետով տրամադրել «Սարուխանի թիվ 2 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ նախադպրոցական կրթության ծառայության մատուցում իրականացնելու համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 118-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(ՁԵԿ. ԱՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ)***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ, 36-րդ և 37-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի 1-ն մասի, Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 21) կետի դրույթներով՝ առաջարկվում է.

1. Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող Գավառ համայնքի Նորատուս բնակավայրի Սևանի փողոց 3-րդ նրբանցք 3 հասցեում գտնվող 657,7 (վեց հարյուր հիսունյոթ ամբողջ յոթ տասնորդական) քմ մակերեսով մանկապարտեզի շենքը, 28,6 քմ մակերեսով կաթսայատունն ու շինությունների զբաղեցրած և սպասարկման համար նախատեսված 0,349 (զրո ամբողջ երեք հարյուր քառասունինն հազարերորդական) հա մակերեսով հասարակական կառուցապատման նշանակության հողամասը անհատույց օգտագործման իրավունքով, 2030 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ օգտագործման ժամկետով տրամադրել «Նորատուսի թիվ 1 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ նախադպրոցական կրթության ծառայության մատուցում իրականացնելու համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 119-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(ՁԵԿ. ԱՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ)***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ, 36-րդ և 37-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի 1-ն մասի, Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի

Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 21) կետի դրույթներով՝ առաջարկվում է.

1. Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող Գավառ համայնքի Նորատուս բնակավայրի Սևանի փողոց 13-րդ նրբանցք 1 հասցեում գտնվող 1048,7 (մեկ հազար քառասունութ ամբողջ յոթ տասնորդական) քմ մակերեսով մանկապարտեզի շենքը, կաթսայատունն ու շինությունների զբաղեցրած և սպասարկման համար նախատեսված 0,4689 (զրո ամբողջ չորս հազար վեց հարյուր ութսունինն տասհազարերորդական) հա մակերեսով հասարակական կառուցապատման նշանակության հողամասը անհատույց օգտագործման իրավունքով, 2030 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ օգտագործման ժամկետով տրամադրել «Նորատուսի թիվ 2 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ նախադպրոցական կրթության ծառայության մատուցում իրականացնելու համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 120-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՀԻՄՔՈՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(ՁԵԿ. ԱՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ)***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ, 36-րդ և 37-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 589-րդ հոդվածի 1-ն մասի, Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 21) կետի դրույթներով, նկատի ունենալով, որ «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերությունը սեփականության իրավունքով ընկերությանը պատկանող Գավառ համայնքի Գանձակի մշակույթի տան 2-րդ հարկում գտնվող տարածքի փոխարեն փաստացի օգտագործում է նույն շենքի առաջին հարկում գտնվող տարածքը, հիմք ընդունելով սեփականության իրավունքի փոփոխության կատարման հիմքով տարածքների փոխանակում կատարելու մասին «Հայփոստ» ՓԲԸ տնօրինության 06.12.2024թ. համաձայնությունը՝ առաջարկվում է.

«Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերություն հետ կատարել տարածքների փոխանակություն.
1. Գավառ համայնքի Գանձակ բնակավայրի Հ. Բաղրամյան փողոց 2 հասցեում գտնվող Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող մշակույթի տան առաջին հարկի կենտրոնական մուտքից ձախ առաջին սենյակը, որը փաստացի օգտագործվում է «Հայփոստ» ՓԲ ընկերության կողմից, փոխանակել նույն շենքի երկրորդ հարկում գտնվող, ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող սենյակի հետ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 121-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ)***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 21/ կետի դրույթներով, հիմք ընդունելով «ՊիՎիԷմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2022 թվականի մայիսի 16-ի և «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության և 2025 թվականի ապրիլի 04-ի գնահատման հաշվետվություններում նշված շուկայական արժեքները՝ առաջարկվում է.

1. Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող հետևյալ տրանսպորտային միջոցներն օտարել աճուրդային կարգով.
1) TOYOTA CAMRY 2,4 – թողարկման տարեթիվը՝ 2010թ., պետհամարանիշը՝ 990 CC 61
2) VAZ 21906 - թողարկման տարեթիվը՝ 2014թ., պետհամարանիշը՝ 996 CC 61
3) NIVA VAZ 21214 - թողարկման տարեթիվը՝ 2008թ., պետհամարանիշը՝ 988 CC 61
4) MITSUBISHI MONTERO-SPORT-3,5-թողարկման տարեթիվը՝ 2001թ., պետհամարանիշը՝ 989 CC 61
5) GAZ 3102 - թողարկման տարեթիվը՝ 1998թ., պետհամարանիշը՝ 997 CC 61
6) GAZ 3110 - թողարկման տարեթիվը՝ 2000թ., պետհամարանիշը՝ 651 CG 61
2. Տրանսպորտային միջոցների համար որպես աճուրդի մեկնարկային գին սահմանել «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2025 թվականի ապրիլի 04-ի գնահատման հաշվետվությունում նշված հետևյալ շուկայական արժեքները.
1) TOYOTA CAMRY 2,4 – 2 300 000/երկու միլիոն երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ
2) VAZ 21906 – 1 453 000 /մեկ միլիոն չորս հարյուր հիսուներեք հազար/ ՀՀ դրամ
3) NIVA VAZ 21214 – 813 000 /ութ հարյուր տասներեք հազար/ ՀՀ դրամ
4) MITSUBISHI MONTERO-SPORT-3,5-1 353 000 /մեկ միլիոն երեք հարյուր հիսուներեք հազար/ ՀՀ դրամ
5) GAZ 3102- 501 000 /հինգ հարյուր մեկ հազար/ ՀՀ դրամ
6) GAZ 3110- 145 000 /մեկ հարյուր քառասունհինգ հազար/ ՀՀ դրամ
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 122-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՎԱՐՍԵՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ)***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-մասի 1-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 17.01.2025թ. արտահերթ նիստի թիվ 2-Ն որոշման պահանջները, սոցիալական աջակցության տրամադրման հանձնաժողովի 02.06.2025թ. եզրակացությունը՝ առաջարկվում է.>

1. Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեով նախատեսված 10 բաժնի 7 խմբի 1 դասի գործառնական դասակարգման 4729 տնտեսագիտական հոդվածով նախատեսված գումարից 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ դրամական հատուցում տրամադրել համապատասխան բժշկական կենտրոնին՝ Լճափ բնակավայրի Ազատամարտիկների 4-րդ նրբանցք 20 հասցեի բնակիչ՝ Նունե Սամվելի Գևորգյանի հետագա փուլային բուժման ծառայություն մատուցելու նպատակով /ախտորոշում՝ երկարավուն ուղեղի գոյացություն/:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 123-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՎԱՐՍԵՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ)***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-մասի 1-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 17.01.2025թ. արտահերթ նիստի թիվ 2-Ն որոշման պահանջները, սոցիալական աջակցության տրամադրման հանձնաժողովի 02.06.2025թ. եզրակացությունը՝ առաջարկվում է.

1. Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեով նախատեսված 10 բաժնի 7 խմբի 1 դասի գործառնական դասակարգման 4729 տնտեսագիտական հոդվածով նախատեսված գումարից 980 000 (ինները հարյուր ութսուն հազար ) ՀՀ դրամ դրամական հատուցում տրամադրել <<Սարվոր >> ՍԲՀԿ-ին Նորատուս բնակավայրի Տերյան փողոց, տուն 53 հասցեի բնակիչ՝ Արայիկ Աշոտի Հայրապետյանի զբաղվածությունը ապահովելու նպատակով թվով 20 ոչխար տրամադրելով /մայիսի 29-ին գայլերի կողմից կոտորվել է

ոչխարի հոտը/
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 124-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԾԱՎԱԼԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ***

***(ՁԵԿ. ՀԱՍՄԻԿ ԵՍԱՅԱՆ)***

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 5.1. կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի դրույթներով, նկատի ունենալով, որ լրացուցիչ ֆինանսական եկամուտների ապահովումը առավելապես կօժանդակի համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին իրենց առջև դրված խնդիրները լուծելու՝ առաջարկվում է.

1. Թույլատրել համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեության տեսակների շրջանակներում, իրենց կրթական ծրագրերի որակավորումներին և զբաղմունքներին համապատասխան, ինչպես նաև աշխատանքի վրա հիմնված ուսումնառության մոդելով գործնական աշխատանքային ուսուցման շրջանակներում մատուցել ծառայություն, իրականացնել արտադրություն, արտադրանքի իրացում և վաճառք:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 125-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(ՁԵԿ. ԴԱՎԻԹ ՄԱՋՄԱՆՅԱՆ)***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ և 66-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 35-րդ հոդվածների, ՀՀ

Կառավարության 18.05.2006 թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման դրույթներով՝ առաջարկվում է.

1. Համաձայնություն տալ Գավառ քաղաք, Ազատության փողոց 14/60 ավտոտնակ հասցեում գտնվող, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-0316-0043 կադաստրային ծածկագրով, 0,00201 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողատարածքը և Գոհար Վազգենի Կարապետյանի կողմից կառուցված 20,10 քմ արտաքին (19,30 քմ ներքին) մակերեսով ավտոտնակը ուղղակի վաճառքի միջոցով օտարելու ինքնակամ կառույցն իրականացրած անձին:
2. Վաճառքի գին սահմանել հողամասի 1 քմ-ի համար 1877,7 (մեկ հազար ութ հարյուր յոթանասունյոթ ամբողջ յոթ) ՀՀ դրամ, իսկ ավտոտնակի 1 քմ-ի համար 1422 (մեկ հազար չորս հարյուր քսաներկու) ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 126-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԴԱՎԻԹ ՄԱՋՄԱՆՅԱՆ)***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ և 66-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 35-րդ հոդվածների, ՀՀ Կառավարության 18.05.2006 թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման դրույթներով՝ առաջարկվում է.

1. Համաձայնություն տալ Գավառ քաղաք, Ազատության փողոց 2-րդ փակուղի 71 ավտոտնակ հասցեում գտնվող Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-0294-0288 կադաստրային ծածկագրով, 0,00312 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողատարածքը և Հարազատ Գոդոլի Գրիգորյանի կողմից կառուցված 31,20 քմ արտաքին (28,80 քմ ներքին) մակերեսով ավտոտնակը ուղղակի վաճառքի միջոցով օտարելու ինքնակամ կառույցն իրականացրած անձին:
2. Վաճառքի գին սահմանել հողամասի 1 քմ-ի համար 1221,0 (մեկ հազար երկու հարյուր քսանմեկ) ՀՀ դրամ, իսկ ավտոտնակի 1 քմ-ի համար 1209 (մեկ հազար երկու հարյուր ինը) ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 127-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԴԱՎԻԹ ՄԱՋՄԱՆՅԱՆ)***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ և 66-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 35-րդ հոդվածների, ՀՀ Կառավարության 18.05.2006 թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման դրույթներով՝ առաջարկվում է.

1. Համաձայնություն տալ Գավառ քաղաք, Ազատության փողոց 2-րդ փակուղի 72 ավտոտնակ հասցեում գտնվող Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-0294-0287 կադաստրային ծածկագրով, 0,00313 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողատարածքը և Հարազատ Գոդոլի Գրիգորյանի կողմից կառուցված 31,30 քմ արտաքին (28,80 քմ ներքին) մակերեսով ավտոտնակը ուղղակի վաճառքի միջոցով օտարելու ինքնակամ կառոյցն իրականացրած անձին:
2. Վաճառքի գին սահմանել հողամասի 1 քմ-ի համար 1221,0 (մեկ հազար երկու հարյուր քսանմեկ) ՀՀ դրամ, իսկ ավտոտնակի 1 քմ-ի համար 1209 (մեկ հազար երկու հարյուր ինը) ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 128-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ, ԾԱԾԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԴԱՎԻԹ ՄԱՋՄԱՆՅԱՆ)***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, ՀՀ հողային

օրենսգրքի 61-րդ և 66-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 35-րդ հոդվածների, ՀՀ Կառավարության 18.05.2006 թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման դրույթներով՝ առաջարկվում է.

1. Համաձայնություն տալ Գավառ քաղաք, Ազատության փողոց 1-ին նրբանցք, 2-րդ փակուղի 72 ավտոտնակ հասցեում գտնվող Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-0289-0250 կադաստրային ծածկագրով, 0,00261 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողատարածքը և Կարինե Հովհաննեսի Ղռեջյանի կողմից կառուցված 23,9 քմ արտաքին (22,6 քմ ներքին) մակերեսով ավտոտնակը և 2,6 քմ մակերեսով ծածկը ուղղակի վաճառքի միջոցով օտարելու ինքնակամ կառույցն իրականացրած անձին:
2. Վաճառքի գին սահմանել հողամասի 1 քմ-ի համար 514,8 (հինգ հարյուր տասնչորս ամբողջ ութ) ՀՀ դրամ, իսկ ավտոտնակի և ծածկի 1 քմ-ի համար 874 (ութ հարյուր յոթանասունչորս) ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 129-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԴԱՎԻԹ ՄԱՋՄԱՆՅԱՆ)***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 23-րդ հոդվածների, ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ, 62-րդ և 66-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 35-րդ հոդվածների դրույթներով՝ առաջարկվում է.

1. Հետաձգել Գավառ քաղաքի Լ. Հարությունյան փողոց 17 հասցեում գտնվող Վեմիր Վրեժի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի վկայական N2148230, տրված 08.08.2006թ.) ավտոտեխսպասարկման կետի կառուցման ու սպասարկման համար հատկացված, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող (սեփականության իրավունքի վկայական N30042025-05-007, տրված 29.04.2025թ.) ք. Գավառ Լ. Հարությունյան փողոց 17 հողամաս հասցեում գտնվող 05-0014-0388-0005 կադաստրային ծածկագրով, 0,03039 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության, սահմանափակումներ չունեցող հողատարածքն գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի միջոցով օտարելը Վեմիր Վրեժի Գրիգորյանին՝ լրացուցիչ ուսումնասիրություն կատարելու

նպատակով:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 130-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ «ԳԱՎԱՌԻ ՁԿՆԱԲՈՒԾԱՐԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ /ՍԵՐՎԻՏՈՒՏ/ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐԾՐՈՒՆ ՂՈՒՐՇՈՒԴՅԱՆ)***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 50-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 210-րդ, 211-րդ, 214-րդ և 213-րդ, հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով « ԳԱՎԱՌԻ ՁԿՆԱԲՈՒԾԱՐԱՆ» ՍՊԸ-ի տնօրենի դիմումը՝ առաջարկվում է.

1. Գավառ համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության, 05-001-3468-0003 կադաստրային ծածկագրով, 0,00328 հա մակերեսով հողամասը սահմանափակ օգտվելու իրավունքով /սերվիտուտ/ 90 տարի ժամկետով տրամադրել «ԳԱՎԱՌԻ ՁԿՆԱԲՈՒԾԱՐԱՆ» ՍՊԸ-ին տվյալ հողամասով անցնող ջրատար խողովակի շահագործման և սպասարկման համար:
2. Նշված հողամասի օգտագործման՝ սերվիտուտի տրամադրման տարեկան վարձավճարը սահմանել 20000 /քսան հազար/ ՀՀ դրամ:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 131-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՆՎԻՐԱԲԵՐՎԱԾ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՎԱԿՈՒՄԱՅԻՆ (ՓՈՇԵԿՈՒԼ) ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՀԱՇՎԱՌԵԼԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ «ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԼԻԼԻԹ ԲԱԲԻՆՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Գավառ համայնքի և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի միջև կնքված WAFT-GQ-04/4 նպատակային նվիրաբերության պայմանագրի դրույթները՝ առաջարկվում է.

1. Հաստատել Գավառ համայնքի գույքագրման փաստաթղթերում 86 000 000 /ութսունվեց միլիոն/ ՀՀ դրամ արժեքով KO318 Д /UKM-6500/ մակնիշի քաղաքային կոմունալ վակումային (փոշեկուլ) մեքենայի հաշվառումը:
2. Գավառ համայնքին սեփականության իրավունքով պատկանող քաղաքային կոմունալ վակումային (փոշեկուլ) մեքենան Գավառ համայնքի կոմունալ սպասարկման և աղբահանության աշխատանքների կազմակերպման նպատակով անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով հատկացնել «Գավառ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային հիմնարկին:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 132-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԻՆՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածով՝ առաջարկվում է.

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի ավագանու իններորդ նստաշրջանի առաջին նիստի գումարման օր և ժամ սահմանել 2025 թվականի թվականի սեպտեմբերի 09-ը ժամը 1400-ն:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 133-Ա)*

Ավագանու անդամներ

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՀՐԱՅՐ ԳՈՒԼԱԲՅԱՆ

ԱՐՍԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՐՏԱԿ ՋԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ՕՆԻԿ ԴԱՆՈՅԱՆ

ԱԼԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ՄԱՐԻԱՄ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՆՈՒՆԵ ՄԻՐԻԲՅԱՆ

ԱՆԻ ՊԵՏՈՅԱՆ

ԼԱՎՐԻԿ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԱԴԱՄՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԻՐԻԲՅԱՆ

*Գավառ համայնքի ղեկավար*

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ_____

*Նիստն արձանագրեց՝* Կարինե Մանուկյանը

_____